

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳՈՐՏՈՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹ

Վերջերս գորտոպահայ գաղութը մեծ ուռնահմբությամբ կատարել է գաղութի ս. Դևորգ եկեղեցուն կից վարժարանի ամբողջորյա դարձնելու տարեդարձը, որը տեղի է ունեցել 1966 թ. հուլիսի 25-ին՝ շնորհիվ գաղութային վարչության ջանքերին:

Այս առթիվ տրված հանդեսին ներկա են եղել Արգենտինայի պետական կրթական խորհրդի ներկայացուցիչ օր. Նելիա Տել Դարմեն Մարթինեսը, ազգային պաշտոնական մարմիններ, վարչության, կրթական հանձնախմբի և այլ կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներ:

Խանդավառ ելույթներից հետո հանդեսը փակվում է հոգևոր հովիվ հոգ. տ. Տաթև վրդ. Ղարիբյանի օրհնության խոսքով ու «Պահպանիչ»-ով:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

1967 թ. սեպտեմբերի 24-ին ուրուգվահայ գաղութը Կեդր. վարչական խորհրդի նախաձեռնությամբ և Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Բաբգեն արք. Ապատյանի նախագահությամբ տոնել է հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Տոլապճյանի քահանայության 50-ամյա հոբելյանը, որն ավելի քան 47 տարիներ հոգ. հովիվն է եղել ուրուգվահայ գաղութի:

Ս. Ներսես Շնորհալի եկեղեցում պատարագել է գեր. պատվիրակ սրբազանը: Նա իր քարոզի մեջ անդրադարձել է հոբելյար հայր սուրբի կատարած եկեղեցական-ազգային ծառայություններին, շնորհավորելով և ցանկանալով նրան ավելի ուժ և եռանդ կրելու Քրիստոսի քաղցր լուծը:

Ս. պատարագից հետո ի պատիվ տ. Ներսես ծ. վարդապետի Հայ մշակութային սրահի մեջ տրվում է ճաշկերույթ:

Համայնքը այս առթիվ հայտնում է իր որդիական շնորհակալությունն ու երախտագիտությունը իր հովվին անձնվեր ծառայության համար:

Դժբախտաբար հայր սուրբը իր հոբելյանից հետո երկար չի ապրում: Չանցած երեք շաբաթ նա 89 տարեկան հասակում կնքում է իր մահկանացուն հանգիստ խղճով իր հետին թողնելով բազմամյա տարիների մի վաստակ:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՄԻՍ

Հայ մշակույթի ամսվա առթիվ Բուենոս-Այրեսում տեղացի գրական շրջանակին և հայ գաղութին ներկայացվել է հայ արվեստը:

Այդ առթիվ հոկտեմբերի 1-ին Մեսրոպյան սրահի մեջ, նախագահությամբ Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Բաբգեն արք. Ապատյանի, տրվեց հայկական պարի դպրոցահանդես, իսկ հոկտեմբերի 13-ին, նախաձեռնությամբ հայ համալսարանականների միության, բացվում է Արգենտինայի և Ուրուգվայի հայ նկարիչների ցուցահանդեսը Գալերիա Փավսերի սրահներից մեկի մեջ: Բացմանը ներկա է լինում նաև պատվիրակ սրբազանը:

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԹԵՄ

Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Բաբգեն արք. Ապատյանը վերջերս երեք շաբաթով հովվական այցելության է մեկնել Սան-Պաուլո: Գեր. սրբազան հորը ընկերակցում էին Մարսելից Հարավային Ամերիկա շրջապտույտի մեկնած հոգ. տ. Վազգեն և տ. Տարոն վարդապետները:

Այդ ընթացքում սրբազանը նախագահում է Կեդր. վարչական խորհրդի մի քանի նիստերին, մոտից ծանոթանում է գաղութի ազգային և եկեղեցական կյանքին և գնահատանքով ականատես է լինում շինարարական բարեգործությունների ի մասնավորի Հայ Կեդրոն սրահի հիմնական վերանորոգությանը, որի բացմանը նախագահում է ինքը:

Սեպտեմբերի 2-ին՝ կիրակի օր, սրբազանը ս. պատարագ է մատուցում և ձեռնադրում է երկու ավագ սարկավագների՝ Օննիկ Թամըլյանին, որը Կեդր. վարչական խորհրդի կողմից ներկայացված է իբրև քահանայական թեկնածու, և Լևոն Տոլապճյանին: Գեր. սրբազանը այս առթիվ քարոզում է «Ետևես եկուր» բնաբանով:

Սեպտեմբերի 9-ին պատվիրակ սրբազանը վերադառնում է Բուենոս-Այրես:

ԱՄՆ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցու դպրաց դասերի միությունը նոյեմբերի 10—12 օրերին գումարել է իր տարեկան համաժողովը Վաշինգտոնում ս. Մարիամ եկեղեցու դպրաց դասի հրավերով:

Համաժողովին նախագահել է Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գեր. տ. Թորգոմ եպսկ. Մանուկյանը:

Համաժողովում քննարկվել են մի շարք հարցեր Ամերիկայի եկեղեցական կյանքին առնչվող, ինչպես օրինակ՝ դպիրների պատրաստման հարց, Ամերիկայում եկեղեցիների մեջ արարողությունների միանմանության հարց և այլն և ընդունվել են համապատասխան որոշումներ:

Կիրակի օրը պատարագել է առաջնորդ սրբազանը: Պատարագից առաջ նա դպրության աստիճան է տվել հինգ երիտասարդների և վարդապետական մասնավոր գավազանի իշխանություն՝ տեղի հոգ. հովիվ տ. Փառեն աբեղա Ավետիքյանին:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1967 թվականի սեպտեմբերի 1—4-ին Նյու-Յորքում, Վայ Էմ Սի Էյ Ընկերակցության ժողովասրահի մեջ, նախագահությամբ Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանի, գումարվել է Հայաստանյայց եկեղեցվո Երիտասարդական կազմակերպության 21-րդ տարեկան համագումարը:

Համագումարը ավարտվել է հաջողությամբ: Լրջորեն քննարկվել են կազմակերպության հետապնդած նպատակները: Համագումարն ընտրել է կազմակերպության Կեդրոնական խորհրդի անդամության նոր կազմը՝ բաղկացած չորս հոգուց: Կազմվել են երկու շրջանային ժողովներ, որպեսզի զբաղվեն Վեհափառ Հայրապետի Ամերիկա այցելության առթիվ Նորին Սրբության կազմակերպությանը հանդիպելու և մոտիկից նրա գործունեությանը ծանոթանալու հարցերով: Սույն համագումարի առթիվ տրված հանդեսների հաստատությունը հատկացված է Նյու-Յորքի Մայր տաճարի շինությանը և տեղական մասնաճյուղերի կարիքներին:

Սույն կազմակերպության մտահոգությամբ ամեն տարի առաջնորդարանը կազմակերպում և համայնքներն է ուղարկում «Ներքին առաքելություն» անվան տակ հայ երիտասարդների՝ սերտացնելու համար համայնքի անդամների հարաբերությունները, որպեսզի նրանք ավելի նվիրված ու արդյունավոր կերպով ծառայեն եկեղեցուն:

1967 թվ. հուլիս ամսին ևս ներքին առաքելությամբ 11 աշակերտներ և չորս եկեղեցականներ այցելել են երեք համայնքների:

Այս երևույթը ցույց է տալիս վերոհիշյալ կազմակերպության եկեղեցանվեր և հայրենանվեր գործունեությունը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1967 թվականի սեպտեմբերի 30-ին Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանը Պրիճփորթում քահանա է ձեռնադրել տեղի աստվածաբանության դասընթացներին հետևող բարեշնորհ Միսաք սրկ. Քեհյայանին և նրան վերանվանել տեր Արի քահանա:

Արժանապատիվ տ. Արի քհն. Քեհյայանը իր քառասունքը անց է կացրել Նյու-Յորքի ս. Խաչ եկեղեցում՝ արժանապատիվ տ. Մամբրե և տ. Մամիկոն քահանաների հրամանի տակ: